

յինքեանս : Զոր բաժանեալ ըստ մարդաբուի գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից . վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի եւ Առբերանուոյ : (Սոր . II 62) :

Ընդգծածս բառերն են այն դայթակղութեան քարը , ուր սայթաքել է պ . Մանանդեան իր անդգոյշ մեկնութեամբ :

«Հողերի հաւասար եւ ըստ մարդաթուի բաժանումը , որքան յայտնի է , համայնական հողարտիրութեան որոշ կարգ է» , — կոչում յօշուածադիրը :

Ճշմարտն ասած , ինձ գոնէ յայտնի չէ եւ շատ տարօրինակ է լսել , որ հողի հաւասար բաժանումը նշան է համայնական կարգի : Բաժանման որեւէ եղանակն ինքնին չէ կարող յատկանիչ համարուել հողատիրութեան : Այն՝ ինչ որ բնորոշում է հողարտիրութիւնը , սեփականութեան իրաւունքն է ամենից ատաջ : Որպէսզի հողը համայնական համարուի , պէտք է ցոյց տրուի , որ նրա իրաւատէրը համայնքն է : Իսկ բաժանման եղանակը համայնական արժէք կ'ունենայ միայն այն դէպքում , երբ նա ծագում է համայնքից որպէս արտայայտութիւն նրա իրաւունքի :

Արդ՝ Խորենացու մօտ խօսքը համայնական հողի մասին չէ , այլ տոհմական , որ բնաւ շիրթելու չէ : Եւ հողի անօրէնը համայնքը չէ , այլ թագաւորը , որ գործում է կամ վեհապետութեան եւ կամ անդրանկութեան իրաւունքով :

Բացի սրանից , Խորենացու խօսքերն անգամ անճիշտ եւ կամ միակողմանի են ըմբռնւում պ . Մանանդեանի կողմից : Որպէսզի իր ենթադրութեան համար ազատ դաշտ պատրաստէ , նախ նա փորձում է հերքել իմ անձնական տեսութիւնս : Ուստի կ'ուզէի այստեղից սկսել , որով եւ դիւրութիւն տուած կը լինինք ընթերցողին աւելի մօտէն հետեւելու խնդրի էութեան :

Խորենացու խօսքը աշխատել ենք արժեցրնել , ի թիւս ուրիշ ապացոյցների , բացատրելու համար սեփական կոչուած ազատութեան ծագումը : Մեր խորհրդածութիւնները միաժամանակ պարզում էին եւ սեփական կամ սեպհական բառի այժմեան նշանակութիւնը :

Մատենադիրները սեպուհ են կոչում հայ

իշխանական տան բոլոր արու զաւակներին , բացի տան գլխաւորից , որ է նահապետ կամ նախարար : Երեքն էլ պարթեւիկ բառեր են : Սեպուհ , լրիւ ձեւը սեպուհը , է պարթեւ visopuhr , որի ատաջին մասը նոյնն է ինչ որ լատին vicus 'գիւղ' , յոյն՝ oikos 'տուն' , իսկ երկրորդը նշանակում է որդի : Ուրեմն սեպուհ նշանակում է բառացի տան , տոհմի որդի :

Նահապետ բառի ստուգաբանութիւնը եւս որոշ է գոնէ ինձ համար : Նահ— համապատասխանում է պարսիկ naf բառին , հնագոյն ձեւն է napha , եւրոպական հաւասարակը հնչում է nabha . որից լատին , յոյն եւ գերման umblicus , omphalos , nabel բառերը : Բոլորի հիմնական միտքն է 'պորտ' , փոխաբերաբար 'սեբուհ' , 'ցեղ' : Նահապետ աւել է թէ նշանակում է բառացի 'ցեղապետ , տոհմապետ' :

Հաւանօրէն նոյն նախ— բառն է թագնուած եւ նախարարի մէջ , որի պարսիկ ձեւը թւում է թէ է Nahodar , եւ յիշում է Ամմիան Մարկելինի մօտ որպէս յատուկ անուն : Թերեւս նախ բառի ազդեցութեամբ նահարար դարձել է նախարար : 'Նշանակութիւնը՝ 'ցեղի , տան պահապան' , գրեթէ նոյն ինչ որ նահապետ : Երկուսին փոխարինող զուտ հայկական բառն է տախուտէր :

Հայ նախարարները մի մի տուն էին , տոհմ , եւ նրանց հողերը տոհմի անբաժանելի սեփականութիւն էր : Անմիջական տէրն ու տընօրէնը տան աւագ անդամն էր , նահապետը , տանուտէրը : Անդրանկութեան սկզբունքը համարում էր անձեռնմխելի : Տան մնացեալ արու զաւակները կոչւում էին սեպուհ :

Նախարարական հողին իրաւական բնոյթ էր տալիս զինուորական ծառայութիւնը : Զօրահաւաքի սովորոյթը չկար հնում : Ամէն մի իշխանական տուն պարտաւոր էր որոշ թուով մարդիկներ տալ : Զինուորական տեսակէտից շատ էլ ցանկալի չէր իշխանական հողերի բաժանումը մանր կտորներին : Մի տուն , որ ի վիճակի էր մի քանի տասնեակ հեծեալ տալ , բաժան—բաժան լինելով , կարող էր համեմատելի դրութեան , որ նրա մասերը առանձին առանձին անգոր կը լինէին անգամ մի մի ձիւար պահել : Երկրի պետին , հարկաւ , ձեռնտու չէին մեծամեծ տներ այնքան զօրեղ , որ սպառնային